Արձանագրություն N 2

ՀՀ Արագածոտնի մարզի Բյուրականի համայնքապետարանի կարիքների համար «ՀՀԱՄ-ԲՅՀ-ԳՀԱՇՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի մասին

Գ.Բյուրական **«16» հուլիսի 2020թ.**
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Գնահատող Հանձնաժողովի նախագահ՝ **Ասատուր Գևորգյան – աշխատակազմի քարտուղար**

Հանձնաժողովի անդամներ՝ **Մուշեղ Փիլիպոսյան –համայնքային ծառայող**

Սյուզաննա Թորոսյան - համայնքային ծառայող

Գնումները համակարգող՝ **Կարեն Հովսեփյան**

Օրակարգ

հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1.Գնման առարկայի նախահաշվայի գինը

ՀՀ Արագածոտնի մարզի Բյուրական համայնքի կարիքների համար հայտարարված ՀՀԱՄ-ԲՅՀ-ԳՀԱՇՁԲ-20/20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նախահաշվային գինը կազմում է 10 447 780 ՀՀ դրամ

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

ՀՀ Արագածոտնի մարզի **Բյուրականի համայնքապետարանի** կարիքների համար կազմակերպված **ՀՀԱՄ-ԲՅՀ-ԳՀԱՇՁԲ-20/20** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել

Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը և էլեկտրոնային հասցեն
ԲԻԳ ՇԻՆ ՍՊԸ	Կոտայքի մարզ, գ.Նոր Գեղի, Յու. Երիցյան փ. տ.15, bigshin@mail.ru
Էներգացանցշին ԲԲԸ	ք.Երևան, Ահարոնյան 2, mllenergy@yandex.ru
Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ ՓԲԸ	ք.Երևան, Փափազյան 8, mariakhachaturyan@tconstruction.am

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին, բացառությամբ հետևյալ դեպքերի.

- Ընթացակարգի հրավերով ձեռք բերվող աշխատանքների անվանումը /չափաբաժնի անվանումը/ նշվել է **Բյուրական համայնքի 3 փողոցների արտաքին լուսավորության կառուցան աշխատանքներ, սակայն** Էներգացանցշին ԲԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում /Հավելված 2/ աշխատանքի անվանումը /չափաբաժնի անվանումը/ նշվել է **Բյուրական համայնքի էլեկտրական լարերի տեղադրման աշխատանքներ, Լուսավորման և ազդանշանային համակարգերի տեղադրման աշխատանքներ, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին:**

- ԲԻԳ ՇԻՆ ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում Ընդհանուր գինը սյունակում սխալ է նշվել Արժեք և ԱԱՀ սյունակներում ներկայացված գների հանրագումարը. մասնավորապես՝ ԲԻԳ ՇԻՆ ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկում նշվել է 6625177+1325035=7950213, սակայն պետք է ընդհանուր գինը նշվեր 7950212:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը /հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան/ հանձնաժողովը որոշեց Էներգացանցշին ԲԲԸ-ի և ԲԻԳ ՇԻՆ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել անբավարար և մերժել:

Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

5. **Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	ինքնարժեքի և շահույթի հանրագումար	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գին
	Չ/Հ1		
ԲԻԳ ՇԻՆ ՍՊԸ	6625177	1325035	7950213
Էներգացանցշին ԲԲԸ	5508428	1101686	6610114
Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ ՓԲԸ	7236350.53	1447270.11	8683620.64

*6.**Չկայացած չափաբաժինների վերաբերյալ:***

Չկայացած չափաբաժիններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3 դեմ – 0

*7.**Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:***

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0

8. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

8.1 20.07.2020թ. ներկայացված ընդհանուր գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվում Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ ՓԲԸ-ն, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

8.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանված կարգով ընտրված մասնակցին ծանուցել պայմանագիր կնքելու մասին:

8.4 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան ընտրված մասնակցի հետ համապատասխան պայամանագիր կնքելու օրվան հաջորդ աշխատանքային օրը ժամը 15:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ասատուր Գևորգյան**

հանձնաժողովի անդամներ՝ _____ **Մուշեղ Փիլիպոսյան**

_____ **Սյուզաննա Թորոսյան**

Գնումները համակարգող՝ _____ **Կարեն Հովսեփյան**